ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
<<ԾԱՂԿԱՁՈՐ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՀՈԱԿ

2310 ք. Ծաղկաձոր Օրբելի Եղբ. 10 Tsakhkadzor city Orbeli Br.10
Հեռ.Tel.: (+374 223) 6-04-02, 6-04-03

08 օգոստոս 2018թ. **N 1**

<<Մարար Թրեյդ>> ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Ա.Աբրահամյանին

Հարգելի պարոն Աբրահամյան

Սույնով ծանուցում եմ, որ <<Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի և <<Մարար Թրեյդ>> ՍՊ ընկերության միջև 07.02.2018թ. կնքված <<Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի կարիքների համար սեղմված բնական գազի մատակարարման թիվ «ԾԿՏ-ԳՀԱՊՁԲ-18/1» պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը մատակարարել 32500խմ ծավալով սեղմված բնական գազ՝ 6500000 (վեց միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ ընդհանուր գնով:

Տեղեկացնում եմ, որ Ձեր Ընկերությունը պարտավոր է մատակարարել 19600խմ ծավալով ապրանք մինչև 15.12.2018թ. (մինչ այժմ մատակարարվել է 12900խմ ծավալով սեղմված բնական գազ): Ձեր ընկերությունը պատշաճ ձևով չի կատարում պայմանագրային պարտավորությունները, այն է՝ խախտում է պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը և հրաժարվում է մատակարարել մնացած ապրանքը:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է <<Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով>>:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 ենթակետը՝ <<Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ը 2018 թվականի օգոստոսի 08-ից միակողմանի մասնակի լուծում է վերը նշված Պայմանագիրը՝ 19600խմ ծավալով սեղմված բնական գազի մասով, որի ընդհանուր արժեքը կազմում է 3920000 (երեք միլիոն ինը հարյուր քսան հազար) ՀՀ դրամ: <<Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ը պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի

մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Տեղեկացնում եմ, որ <<Մարար Թրեյդ>> ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5(հինգ) բանկային օրվա ընթացքում <<Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի 1510021775420100 հաշվեհամարին փոխանցել 58800 (հիսունութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ <<Մարար Թրեյդ>> ՍՊ ընկերությունը նաև պետք է վճարի պայմանագրի ապահովման գումար (տուժանք)՝ 392000 (երեք հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամի չափով՝ 1510021775420100 հաշվեհամարին:

ՀՈԱԿ ՏՆՕՐԵՆ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատ.՝ Արփինե Ավետիսյան